

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՅԻՆ

Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է

- նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,

- ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),

- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,

- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ. պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը: Նման մոտեցումը կօժանդակի աշակերտների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ:

Մաթեմատիկայի գործնական առաջադրանքները կարելի է հանձնարարել ինչպես թեմայի ուսուցումը սկսելուց առաջ, այնպես էլ թեմայի (տեսական նյութի) ուսուցումն ավարտելուց հետո:





Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքները կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը և կարող են օժանդակել աշակերտին ինքնուրույն հանգել տեսական այն հետևություններին, որոնց մասին խոսք է գնում ուսումնական թեմայում: Որպես կանոն, դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում: Դրանք գնահատման ենթակա չեն:

Տեսական գիտելիքը հիմնավորող և ամրապնդող գործնական առաջադրանքներ

Այս խմբի մեջ կարելի է դասել բոլոր այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել այս կամ այն տեսակի հմտության ձևավորմանը (թվաբանական գործողությունների կատարում, հանրահաշվական արտահայտությունների ձևափոխում և պարզեցում, տրված նախնական պայմաններին բավարարող մոդելների պատրաստում, երկրաչափական պարզագույն կառուցումների վրա հենված խնդիրներ, շրջապատող առարկաների բնութագրիչների չափում և դրանցով պայմանավորված հաշվարկներ և այլն):

1-4 դասարանների աշակերտների համար կարելի է կազմակերպել գործնական առաջադրանքների կատարման դաս հետևյալ օրինակով՝

Աշակերտներին տրվում է աղյուսակ, որտեղ թվարկած է վերոհիշյալ մի քանի տեսակի բազմանկյունի՝ համապատասխան պատկերներով: Երեխաները պետք է գրեն յուրաքանչյուր պատկերի կողմերի քանակը և դպրոցում գտնեն այս պատկերների ձևն ունեցող առարկա:

Բազմանկյունի	Կողմերի քանակ	Առարկա
	3	
	4	
	6	
	5	

Աղյուսակը պետք է տալ դասարանի բոլոր աշակերտներին: Այն աշակերտները, որոնք նվազ են արդարացնում սպասելիքները, կստանան նաև օժանդակ զննական նյութ, որպեսզի հեշտանա միջավայրում գոյություն ունեցող առարկաների հետ պատկերների համեմատությունը: Առարկաներ փնտրելու գործընթացում երեխաները գործնականում կիրառում են սեփական գիտելիքները, ինչն ամրապնդում է վերջիններիս ամրապնդմանը:

Պետք է հաշվի առնել, որ 1-4 դասարանում սովորում են տակավին երեխաներ, ուստի առավել արդյունավետ կլինի գործնական աշխատանքը կազմակերպել խաղի տեսքով, որպեսզի մեծանա երեխաների ներգրավվածության ձգտումը դասապրոցեսում: Բերենք օրինակ:

Հավասար գումարներ քարտեր

Քարտ 1	Քարտ 2	Քարտ 3	Քարտ 4
2+2	3+1	2+3	1+4
4+1	3+2	3+3	4+2
1+5	6+0	2+1	3+0
1+3	4+0	5+0	0+5
2+4	5+1	5+2	4+3
1+1	2+0	1+2	0+3

Հարկավոր են 2 խաղակից: Հավասար գումարների քարտերը պատճենահանված և վանդակներով կտրտած: Քարտերը դասավորեք 6 շարքով՝ երեսը դեպի ներքև: Ամեն մի շարքում պետք է լինի 4 քարտ: #1 խաղացողը վերցնում է երկու քարտ: Եթե գումարը միանման է, նա երկու քարտն էլ պահում է իր մոտ, եթե ոչ՝ նա երկուսն էլ ետ է վերադարձնում: #2 խաղացողը նույնկերպ է վարվում: Խաղը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև բոլոր քարտերը չգույգավորվեն: Հաղթում է այն խաղացողը, ով վերջում ամենաշատ քարտ կունենա:

Այնուհետև ուսուցիչը կազմակերպում է մաթեմատիկական խաղ «կրկնապատկումն ու կիսումը չեմ շփոթում»: Դասարանի աշակերտների խմբերին բաժանում են քարտեր մեկից մինչև վեցը թվերի պատկերներով: Խմբի բոլոր աշակերտներն ունեն քարտեր: Խմբերից մեկի աշակերտը ներկայացնում է քարտ՝ մեկից տաս որևէ թվի գրառմամբ և ասում է. Կրկնապատկի՞ր (կամ կիսի՞ր): Երկրորդ խմբի այն աշակերտը, որն ունի համապատասխան գրառման քարտ, պետք է ներկայացնի այն: Այնուհետև նույնը սկսում է երկրորդ խմբի աշակերտը և այսպես շարունակ: Ամեն մի հարցին պետք է հնարավոր լինի պատասխանելը բաժանած քարտերով: Մեկ ճիշտ պատասխանը 1 միավոր է: Հաղթող է համարվում այն խումբը, ով ավելի միավորներ կհավաքի:

Այս և նմանատիպ շատ այլ գործնական առաջադրանքներ կարելի է տալ աշակերտներին դասարանային աշխատանքի կամ տնային հանձնարարության տեսքով: Առաջադրանքի բնույթը և բարդությունը որոշվում է ուսուցչի կողմից՝ ելնելով դասի թեմայից, աշակերտների ընդհանուր պատրաստվածության աստիճանից:

Գործնական աշխատանքները շատ կարևոր դեր են խաղում ցանկացած դասապրոցեսում, և հատկապես մաթեմատիկայի դասերին, քանի որ դրանք, բացի այն որ թույլ չեն տալիս դասը վերածել միապաղաղ, ձանձրալի ժամի և աշակերտներին հոգել, նաև նպաստում են տրամաբանական մտածողության զարգացմանը:

Գիտելիքների ստուգումը կարելի է իրականացնել տարբեր ձևերով՝ հարցարանով, որը կանվանենք ուսուցանող թեստ, ինքնուրույն աշխատանքներով, ուսուցչի կողմից կազմված քարտերի միջոցով: Մրանք կարող են նախատեսված լինել ինչպես անհատական, այնպես էլ զույգերով կամ խմբային աշխատանքների համար: Ուսուցանող ստուգման համար կարելի է կիրառել տարբեր աշխատանքներ: Կարևորը ուսուցանող բնույթի պահպանումն է:

Ուսումնական շարժառիթի ձևավորումը կրտսեր դպրոցականների մոտ

Նախադպրոցական տարիքից սկսած՝ անձի զարգացումը՝ կապված շարժառիթների ստորադասության և ինքնագիտակցության կայացման հետ, շարունակվում է կրտսեր դպրոցական տարիքում: Բայց կրտսեր դպրոցականը գտնվում է այլ պայմաններում. նա ներառված է հասարակայնորեն նշանակալից ուսումնական գործունեության մեջ: Դպրոցական առաջադիմությունից, գնահատականներից՝ ինչպես լավ, այնպես էլ վատ, անմիջականորեն կախված է այս փուլում անձի զարգացումը:

Ի՞նչն է շարժում երեխային, ինչպիսի՞ ցանկություններ նա ունի: Իր դպրոցական կյանքի սկզբում, ունենալով դպրոցականի ներքին դիրք՝ նա ցանկանում է սովորել: Ընդ որում սովորել լավ, գերազանց: Ուսման բազմազան սոցիալական դրդապատճառների կողքին գլխավոր տեղը զբաղեցնում է բարձր գնահատականներ ստանալու շարժառիթը: Բարձր գնահատականները փոքրիկ աշակերտի համար այլ խրախուսումների աղբյուր է, նրա հուզական բարեկեցության հիմքը, հպարտության առարկան: Երբ երեխան հաջողությամբ սովորում է, նրան գովում է և ուսուցիչը, և ծնողները, նրան որպես օրինակ են բերում այլ երեխաների: Ավելին, դասարանում, որտեղ ուսուցչի կարծիքը ոչ միայն որոշիչ է, այլև միակ հեղինակավոր կարծիքն է, բարձր գնահատականները և մնացած գնահատականներն ապահովում են համապատասխան կարգավիճակ:

Ուսման այլ՝ լայն սոցիալական դրդապատճառները՝ պարտք, պատասխանատվություն, կրթության ստանալու անհրաժեշտությունը և այլն, նույնպես գիտակցվում են աշակերտների կողմից՝ յուրահատուկ իմաստ հաղորդելով նրա ուսումնական կյանքին: Չնայած, այս դրդապատճառները դեռ պասիվ են, ի տարբերություն բարձր գնահատական կամ գովասանք ստանալու դրդապատճառից, որն իրապես գործող դրդապատճառ է. վերջինիս իրացման համար աշակերտը պատրաստ է անմիջապես սովորել դասերը, կատարել բոլոր առաջադրանքները:

Լայն սոցիալական դրդապատճառները համապատասխանում են այն արժեքային կողմնորոշիչներին, որոնք երեխաները վերցնում են մեծերից՝ գլխավորապես ընտանիքում:

Բավական հետաքրքիր են նաև ճանաչողական հետաքրքրությունների տարբերությունները: Տարրական դասարաններում ինչ-որ առարկա խորությամբ ուսումնասիրելու հետաքրքրությունը հազվադեպ է հանդիպում, սովորաբար այն համադրվում է հատուկ ընդունակությունների վաղ զարգացման հետ: Այսպիսի երեխաները, որոնց համարում են օժտված, շատ քիչ են: Կրտսեր դպրոցականների մեծամասնությանը բնորոշ են ոչ այդքան բարձր մակարդակի ճանաչողական հետաքրքրություններ: Բայց առաջադիմությամբ աչքի ընկնող երեխաներին գրավում են տարբեր, այդ թվում նաև՝ բարդ ուսումնական առարկաներ: Նրանք իրավիճակային են. տարբեր դասերի ընթացքում ուսումնական տարբեր նյութերի ուսումնասիրման

գործընթացում նրանց մոտ նկատվում է ինտելեկտուալ ակտիվության վերելքներ, հետաքրքրության փայլատակումներ:

Ճանաչողական շարժառիթի կարևորագույն ասպեկտը ուսումնա-ճանաչողական շարժառիթներն են, ինքնակատարելագործման շարժառիթները: Եթե երեխան ուսուցման գործընթացում սկսում է ուրախանալ նրանով, որ ինչ-որ բան է իմացել, սովորել, նշանակում է նրա մոտ զարգացել է ուսումնական գործունեության կառուցվածքին ադեկվատ շարժառիթ:

Հասնելու շարժառիթը տարրական դասարաններում դառնում է գերակայող: Բարձր առաջադիմությամբ երեխաների մոտ վառ արտահայտված է հաջողության հասնելու շարժառիթը. ցանկություն՝ լավ, ճիշտ կատարելու առաջադրանքը, անհրաժեշտ արդյունքը ստանալու: Եվ չնայած այն սովորաբար համադրվում է բարձր գնահատական ստանալու դրդապատճառի հետ, այնուամենայնիվ կողմնորոշում է երեխային ուսումնական գործողությունների արդյունքայնության ու որակի վրա՝ անկախ այդ արտաքին գնահատականի՝ դրանով իսկ նպաստելով ինքնակարգավորման ձևավորմանը: Հաջողության հասնելու շարժառիթը ճանաչողական հետաքրքրությունների հետ, առավել արժեքավոր դրդապատճառ է, այն պետք է տարբերակել հեղինակային շարժառիթից:

Հեղինակային շարժառիթը պակաս տարածված է, քան հասնելու շարժառիթը, բնորոշ լիդերի հակումներ ու չափազանց բարձր ինքնագնահատական ունեցող երեխաներին: Այն դրդում է աշակերտին առավել լավ սովորել համադասարանցիներից, առանձնանալ նրանցից, լինել առաջինը: Եթե հեղինակային դրդապատճառին համապատասխանում են բավական զարգացած ընդունակություններ, այն դառնում է ուժեղ շարժիչ գործոն աշակերտի համար, ով կներդնի իր աշխատունակության և աշխատասիրության առավելագույն մակարդակը ուսումնական լավագույն արդյունքներին հասնելու համար: Բացի այդ, մեծանալով՝ նրանք հասնում են գործունեության բարձր արդյունավետության, սակայն անկարող են ստեղծագործականության. ձգտումն ամեն ինչ անելու և լավ, և արագ, նրանց զրկում է ստեղծագործական որոնումների հնարավորությունից:

Ցածր առաջադիմությամբ աշակերտների մոտ հեղինակային շարժառիթը չի զարգանում: Հաջողության հասնելու շարժառիթը, ինչպես նաև բարձր գնահատական ստանալու շարժառիթը բնորոշ են դպրոցական ուսուցման սկզբանական շրջանին: Բայց այս ժամանակ էլ հաջողության հասնելու դրդապատճառին զուգահեռ դրսևորվում է անհաջողությունից խուսափելու շարժառիթը: Այս մոտիվացիոն միտումը զարգանում է ամբողջ տարրական ուսուցման ընթացքում, ինչի հետևանքով ցածր առաջադիմությամբ աշակերտները հաճախ զրկվում են հաջողության հասնելու և բարձր գնահատական ստանալու դրդապատճառներից, իսկ անհաջողությունից խուսափելու շարժառիթը ձեռք է բերում նշանակալից ուժ: Այն ուղեկցվում է տագնապայնությամբ, գնահատման

իրավիճակներում վախով՝ ուսումնական գործունեության հաղորդելով բացասական հուզական երանգավորում: Այս նույն ժամանակ ցածր առաջադիմությամբ աշակերտների մոտ առաջանում է փոխհատուցող /կոմպենսատոր/ շարժառիթ: Սրանք ուսումնական գործունեության նկատմամբ երկրորդային դրդապատճառներ են, որոնք թույլ են տալիս հաստատվել այլ ոլորտներում՝ սպորտի, երաժշտության, նկարչության և այլն: Երբ ինքնահաստատվելու պահանջմունքը բավարարվում է գործունեության որոշակի ոլորտում, ցածր առաջադիմությունը չի դառնում աշակերտի տագնապային ապրումների աղբյուր:

Այսպիսով, շարժառիթը բարդ կառուցվածքային գոյացություն է, որում տարբեր շարժառիթներ հանդես են գալիս միասնության և փոխկապակցվածության մեջ: Այդ իսկ պատճառով շարժառիթի ձևավորումը չի կարող ընթանալ մասերով /սկզբում կձևավորենք գիտելիքների կարևորության հասկացումը, այնուհետև պարտքի և պատասխանատվության, և այլն/: Միայն ամբողջական մոտեցումը կարող է ապահովել շարժառիթի ձևավորման հաջողությունը: Նպատակը հենց այն շղթան է, որի միջոցով հնարավոր է կառավարել ուսումնական շարժառիթի ձևավորման գործընթացը և ապահովել տվյալ մոտեցումը:

Դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի առջև դրված հիմնական խնդիրների մեջ չկա առավել կարևոր և միաժամանակ առավել բարդ խնդիր, քան սովորողների մոտ ուսումնական գործունեության նկատմամբ **դրական և կայուն շարժառիթի ձևավորման խնդիրը**, քանի որ, ակնհայտ է, որ առանց այդպիսի շարժառիթի սովորողի գործունեությունը ուսումնական գործընթացում կլինի անարդյունավետ:

Որո՞նք են ուսումնական գործունեության նկատմամբ դրական շարժառիթի ձևավորման ուղիներն ու մեթոդները: Դիտարկենք դրանցից հիմնականները:

- ուսումնական նյութի բովանդակությունը,
- ուսումնական գործունեության մակարդակն ու բնույթը,
- ուսուցչի հարաբերությունը սովորողների հետ:

Ինչպես գիտենք, ուսումնական նյութը իր բովանդակությամբ հենվում է սովորողի նախկին գիտելիքների և նրա կյանքի փորձի վրա: Սակայն միաժամանակ այն պարտադիր պետք է կրի նոր ինֆորմացիա, որի ներքո կարող են յուրացվել նախկին գիտելիքներին ու փորձը: Միայն այդ դեպքում սովորողների մոտ կառաջանա և կզարգանա աշխարհը ընկալելու և ճանաչելու անձնային պահանջմունք, առանց որի արդի ուսուցումը ուղղակի անհնար է:

Այսպիսով, շարժառիթի ձևավորման մեջ կարևոր դեր է խաղում *ուսումնական նյութի բովանդակությունը*: Կարևոր է հասկանալ, որ յուրաքանչյուր դասի, թեմայի բովանդակությունը կարող է հիմնավորվել կամ շարժառիթ հանդիսանալ միայն հետևյալ պայմանների կատարման դեպքում.

- հաշվի առնել սովորողների պահանջմունքների բնույթը,

- լինել հասանելի, բայց ոչ պարզ ու հեշտ,
- հենվել նախկին գիտելիքների վրա, տալ նոր տեղեկատվություն,
- ուղղված լինել շրջապատող աշխարհի երևույթների և օբյեկտների ճանաչման խնդրի հաղթահարմանը /պրոբլեմային ուսուցում/ և այդ ճանաչման մեթոդների տիրապետմանը:

Շարժառիթի ձևավորման ևս մեկ ուղի ընկած է **ուսուցչի և աշակերտների հարաբերություններում**: Ուսուցչի գործունեության հիմնական ուղղվածությունը տվյալ դեպքում կայանում է ուսուցման պրոցեսում հուզական հարմարավետ մթնոլորտի ստեղծման, խմբում բարեհամբույր հարաբերությունների ապահովման, սովորողների նկատմամբ մանկավարժական լավատեսության դրսևորման մեջ, որը կայանում է նրա մեջ, որ ուսուցիչը հույս է ներշնչում սովորողներին և հավատում է նրանց կարողություն-ներին: Եվ, իհարկե, ուսուցիչը պետք է լինի վառ արտահայտված հետաքրքրությամբ անձնավորություն՝ իր գործունեության, մասնագիտության նկատմամբ, այդ դեպքում նա կարող է ազդել իր սովորողների վրա և իր սեփական օրինակով: Ուսումնական գործունեության նկատմամբ ճիշտ վերաբերմունքի առաջացման վրա էական ազդեցություն կարող են գործել դրական հույզերը, որոնք առաջանում են սովորողների գործունեության ընթացքում և ձեռք բերած արդյունքից: Խիստ կարևոր է սովորողների հետ հարաբերությունների որակը: Այդ առումով հարկավոր է նկատառել՝

1. անձի զարգացումը, թերությունների ցուցադրումը, սովորողների նկատմամբ վստահության դրսևորումը,
2. ուսուցչի անձնական վերաբերմունքի դրսևորումը աշակերտի նկատմամբ, սեփական կարծիքի արտահայտման ձևը,
3. խմբում ընկերական հարաբերությունների կազմակերպումը /փոխստուգում, փոխօգնություն, կարծիքների փոխանակում/:

Դրական շարժառիթի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի աշակերտի գիտելիքների գնահատումը: Կարևոր է, որպեսզի սովորողի աշխատանքի գնահատման մեջ գլխավորը լինի այդ աշխատանքի որակական վերլուծությունը. ուսումնական նյութի յուրացման բոլոր դրական պահերի, առաջընթացների ընդգծումը և թերությունների պատճառների դուրսբերումը: Միավորային գնահատումը պետք է զբաղեցնի ուսուցչի գնահատման գործընթացում երկրորդական տեղ: Դա հատկապես կարևոր է հիշել ուսուցողական գնահատման ժամանակ: Հոգեբանները հետաքրքիր գիտափորձ են անցկացրել: Մի խումբ աշակերտներից յուրաքանչյուրն ուսուցչի ներկայությամբ ինքնուրույն կատարել է ուսումնական առաջադրանք: Մի քանիսին ուսուցիչը հաճախ մոտեցել, հետաքրքրվել է, թե ինչպես են առաջադրանքը կատարում, գովել, խրախուսել է: Մի քանիսին էլ մոտենալիս գլխավորապես նշել է նրանց թույլ տված սխալները, արել կտրուկ դիտողություններ, քննադատել, իսկ մի քանի հոգու նկատմամբ էլ եղել է անտարբեր, բոլորովին անուշադիր, նրանցից ոչ մեկին ոչ մի անգամ չի մոտեցել: Ստացվել են հետևյալ արդյունքները. առաջադրանքը ամենից լավ կատարել են նրանք,

ում ուսուցիչը խրախուսել է, քաջալերել: Առաջադրանքը վատ են կատարել նրանք, ովքեր արժանացել են դիտողությունների, ում տրամադրությունը առաջադրանքը կատարելիս ուսուցիչը փչացրել է: Բոլորովին անսպասելին այն էր, որ ամենից ցածր արդյունքներ տվել են ոչ թե նրանք, ովքեր արժանացել են ուսուցչի դիտողություններին, այլ նրանք, ովքեր ուսուցչի կողմից մատնվել են անուշադրության, ովքեր ո՛չ քաջալերվել և ո՛չ էլ պարսավանքի են արժանացել: Այս փորձը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ աշակերտը ուսումնական գործընթացում գնահատվելու պահանջունք ունի, որ նա ավելի շատ կարիք ունի խրախուսանքի, քաջալերանքի, դրական գնահատականի, որ նրան վշտացնում է բացասական գնահատականը:

Շատ մանկավարժներ առաջարկում են /որոշ տեղեր նաև կիրառում/ հոգեկան խթանման մի հիանալի միջոց՝ **խաղը**: Խաղին հատուկ կարևորություն է տրվում վաղ դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում, քանի որ, ըստ հոգեբանների, այդ տարիքն առանձնանում է որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան: Այդ տարիքում խաղն է անձի ձևավորման կարևորագույն միջոցը, գործոնը: Ուստի մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման համակարգում խաղի դերին և ուսուցումը խաղի օգնությամբ կազմակերպելուն: Ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևե-ռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիք-ներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համատություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները:

Զարգացնող ուսուցման հիմնական խնդիրներից մեկը դպրոցականների մեջ ակտիվ, ինքնուրույն, ստեղծագործական մտածողության ձևավորումն է: Ստեղծագործական մտածողության զարգացման համար անհրաժեշտ է աշակերտներին հաճախակի դնել այնպիսի պրոբլեմային իրավիճակներում, որոնց մեջ նրանցից պահանջվի հետազոտական մոտեցում: Հարկավոր է այնպես կազմակերպել պարապմունքները, որ աշակերտների մեջ ծագեն ոչ միայն պրոբլեմային հարցեր, այլև դրանք ինքնուրույնաբար լուծելու ձգտում: Ստեղծագործական մտածողությունը հետազոտական պրոցեսի հիմնական բաղադրամասն է, երբ աշակերտն ինքն է բացահայտում, ինքն է գտնում պրոբլեմի լուծման մինչ այդ իրեն անհայտ ուղին: Բազմաթիվ դիտարկումները ցույց են տալիս, որ երեխայի ստեղծագործական դրսևորումները մեծ չափով կախված են ոչ միայն շրջապատի իմացական մակարդակից /ընտանիք, համադասարանցիներ, մանկավարժներ, ստեղծագործական խմբակներ և այլն/, այլև նրա ստեղծագործական ընդունակությունների հանդեպ շրջապատի ցուցաբերած գնահատականից:

Իր գործունեության մեջ տարրական դասարանների ուսուցիչը պետք է ոչ միայն հաշվի առնի ուսումնական շարժառիթի ձևավորման ուղիները, այլև ակտիվորեն կիրառի սովորողների խթանման զանազան մեթոդներ և հնարներ: Պայմանականորեն դրանք

կարելի է բաժանել 4 խմբերի.

- **Հուզական** /հաջողության, խրախուսման և պարսավման իրավիճակի ստեղծում, վառ ակնառու պատկերավոր պատկերացումների ստեղծում, խթանող գնահատում/,

- **Ճանաչողական** /հիմնվել կյանքի փորձի վրա, առաջադրանքների ազատ ընտրություն, այլընտրանքային լուծումների փնտրում, տրամաբանական խնդիրների առաջադրում, պրոբլեմային իրավիճակների ստեղծում/,

- **Կամային** /ճանաչողական դժվարություններ, ուսումնական պահանջների առաջադրում, ուսուցման արդյունքների մասին ինֆորմացում, վարքի ռեֆլեքսիա/,

- **Սոցիալական** /փոխօգնության, համագործակցային իրավիճակների ստեղծում, փոխստուգում/:

Խաղային տեխնոլոգիաների նշանակությունն ու դերը կրտսեր դպրոցականի կյանքում

Միրում էք երեխային՝ խաղացեք նրա հետ,

Խաղացեք իսկական, անկեղծ, և դա կլինի ձեր ամենամեծ նվերը նրան: Ա. Մակարենկո

Կրտսեր դպրոցականի համար առաջատար գործունեությունը ուսումն է: Բայց այդ դպրոցականը, որը դեռ երեկ տարված էր իր զվարթ խաղերով, չի կարող լիովին զերծ մնալ դրանից: Խաղը հնար է, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Փոքրիկների համար խաղը ճանաչվում է որպես գործունեության հիմնական ձև: Երբ ուսուցումը համեմվում է խաղերով, դրանք երեխաների համար դառնում են ավելի հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի: Խաղն ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է իր համար էլ աննկատելիորեն ընդգրկել ակտիվ ուսուցման և նույնիսկ այս կամ այն պրոբլեմի լուծման ընթացքի մեջ: Խաղն ուսուցչի օգնականն է՝ ուսումնական գործունեությունը երեխաների համար հետաքրքրաշարժ և հաճելի դարձնելու, նրանց հոգնածությունը և լարվածությունը թուլացնելու, ուշադրությունը կենտրոնացնելու, մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու գործում:

Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝ տարվելով հետաքրքրաշարժությամբ, և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը: Խաղի միջոցով ոչ միայն ուսուցանվում և ամրապնդվում է դասընթացը, այլև այն օգնում է, որ աշակերտն աննկատ ձևով կարողանա հաղթահարել բարդ ուսումնական խնդիրներ:

Խաղի միջոցով երեխան ճանաչում է իրեն շրջապատող այն երևույթները, որոնք ի հայտ են գալիս նաև խաղային իրավիճակներում: Խաղը հանդիսանում է հաղորդակցման, ուսուցման և կյանքի փորձի ձեռքբերման միջոց: Խաղը գործունեության տեսակ է, որի դրդապատճառը ոչ թե նյութական արդյունք և օգուտ ստանալն է, այլ հաճելի ապրումները, ընդունակությունների մարզումը, շրջապատող աշխարհի վրա ներգործելու ձգտումը: Խաղը հանդիսանում է աշխուժության, առողջության աղբյուր, ճանաչողության և անձի զարգացման միջոց:

Չոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 6 տարեկաններն ապրում են տարիքային ճգնաժամ, որի ժամանակ նրանց մեջ ընդգծուն են դառնում հակասության ոգին, կամակորությունը, անբավարարվածությունը, «Ես ինքս» դիրքորոշումը, ըմբոստությունը, խանդը (ուսուցչի, ծնողի, մտերիմ ընկերների նկատմամբ):

Դպրոց ընդունվող երեխայի մեջ նկատվում է օրգանիզմի բուռն զարգացում, որն ընթանում է այդ համակարգերի փոփոխություններով: Դրանցով պայմանավորված՝ երեխան աստիճանաբար ձեռք է բերում իր ուժերին և մտավոր կարողություններին

համապատասխան ծանրաբեռնվածություն կրելու հնարավորություն, որը դպրոցին պատրաստ լինելու կարևոր գործոններից է:

Լուրջ փոփոխություններ են կատարվում երեխայի նյարդային համակարգում, ձևավորման փուլում է գտնվում տարածական-տեսողական ընկալման կարողությունը, հախուռն զարգանում է երեխայի հենաշարժողական համակարգը:

Կմախքի ոսկրացման գործընթացը դեռևս ավարտված չէ, այդ պատճառով սխալ նստելու հետևանքով ողնաշարը կծովի: 6 տարեկանի մեջ գրելու գործընթացում առաջանում է լարվածություն, հոգնածություն, վախեր:

Երկար ժամանակ միևնույն աշխատանքով ծանրաբեռնելու դեպքում ոչ միայն կրնկնի նրանց աշխատանքի արդյունավետությունը, այլ կխաթարվի առողջությունը:

Որքան էլ տարբեր լինեն խաղի վերաբերյալ մոտեցումներն ու ձևավորված տեսությունները, բոլորն էլ ընդունում են, որ խաղը երեխաների զարգացման հրաշալի միջոց է: Այն նաև դաստիարակության անփոխարինելի միջոց է: Խաղի միջոցով ձևավորվում են գրեթե բոլոր այն որակներն ու հատկություններն, որոնք անհրաժեշտ են մարդուն իր ողջ կյանքի ընթացքում: Խաղը ձևավորում է մարդկանց հետ շփվելու, հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, երևակայություն, տրամաբանություն, համբերատարություն, արագ կողմնորոշվելու, ճիշտ լուծումներ գտնելու կարողություն, ուրիշներին օգնելու պատրաստակամություն և այլն: Խաղն իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնք չեն կարող իրագործվել գործունեության ուրիշ ոչ մի տեսակով:

Խաղը մեծ նշանակություն ունի երեխայի կյանքում: Այն ծնվում է երեխայի հետ և դառնում նրա հավատարիմ բարեկամը:

Շայ մեծ բանաստեղծ Թումանյանը գրել է. «Խաղը նրա՝ մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ նրան տրվում է խաղով, ուրախությամբ ընդունվում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»:

Այն մասին, թե ի՞նչն է ստիպում երեխային խաղալ, կան բազմաթիվ կարծիքներ: Ոմանք այդ երևույթը բացատրում են երեխայի մեջ եղած ավելորդ էներգիան սպառելու անհրաժեշտությամբ, մյուսները հաստատում են, որ երեխայի խաղն ինչ-որ դեր կատարելու պահանջմունքի արտահայտությունն է, կամ, որ խաղի օգնությամբ երեխան ճանաչում է շրջապատող աշխարհը, փարատում է ձանձրույթը, սովորում, գտնում իրեն հուզող հարցերի պատասխանը: Խաղն այն կայծն է, որ վառում է հարցասիրություն:

Բոլոր ժամանակներում էլ երեխաները ձգտել են խաղալ: Այն ինքնարտահայտման, ինքնակայացման, ինքնակատարելագործման, աշխարհին իրենք իրենց ճանաչելու հարաշալի միջոց է: Խաղի ժամանակ երեխան դառնում է ինքնավստահ և մրցունակ: Ձեռք է բերում բազմազան հմտություններ, լայն աշխարհայացք, նորը

վերցնելու կարողություն: Խաղի միջոցով երեխան ավելի արագ է սովորում, հետազոտում, ընկալում, համադրում, ճանաչում: Խաղին պետք է վերաբերվել որպես գաղտնիք: Երեխան ինքը պետք է խաղի ընթացքում բացահայտի: Խաղի ավարտը չպետք է թափանցիկ լինի: Խաղի ընթացքում յուրաքանչյուր երեխա իր անհատականությունն է ցույց տալիս՝ առանց կեղծելու:

Խաղը մարդու գործունեության մյուս տեսակներից տարբերվում է նրանով, որ այն բացառում է հարկադրանքի տարրը: Պարտադրել երեխային խաղալ, նշանակում է այդ գործընթացը դարձնել նրա համար անհիմաստ և անհետաքրքիր: Երեխան պետք է բացարձակ կամովին ընդգրկվի խաղում կամ դուրս գա խաղից: Նա պետք է ազատ լինի «ուզում եմ խաղալ» կամ «չեմ ուզում» հարցերի ընտրության մեջ: Այսպիսով՝ խաղային գործունեության հոգեբանական հիմքը ազատ ընտրության զգացումն է:

Չնայած որ խաղային գործունեությունը բնութագրվում է ազատ ընտրության հնարավորությամբ՝ չի նշանակում, որ այն չի պահանջում կամային լարում, դժվարությունները հաղթահարելու ուժ և կարողություն: Ընդհակառակը, հենց խաղն է հնարավորություն տալիս, որ երեխայի զարգացող ուժերը գտնեն այն սահմանները, որոնց հաղթահարման դեպքում էլ կատարվում է իրական զարգացում:

Խաղը թեթևացնում է սխալների և անհաջողությունների թողած ազդեցությունը: Լինելով գործունեության բավականին լուրջ տեսակ՝ այն միևնույն ժամանակ երեխայի մեջ չի առաջացնում հիասթափության, անհաջողության զգացողություն: Այսօր մանկավարժության մեջ տարածված է այն կարծիքը, որ իբր խաղ-մրցույթները ոչ թե օգտակար, այլ, ընդհակառակը, վնասակար են և նույնիսկ «հակամանկավարժական»: Դա բացատրվում է խաղում հաղթողների և պարտվողների ամկայությամբ: Լավ է, որ կան հաղթողներ, բայց պարտությունը լուրջ հետևանքներ է ունենում: Այն պատճառ է դառնում երեխաների ցածր ինքնագնահատականի ձևավորման համար: Իրական խնդիրն այն չէ, թե ինչն է լավ՝ ցածր, թե բարձր ինքնագնահատականը, կարևոր է, որ երեխան հստակ գնահատի իր իրական ուժերն ու հնարավորությունները: Հենց այդ է պատճառը, որ երեխան պետք է խաղա և խաղի ընթացքում ձևավորի իսկական, բազմակողմանի ինքնագնահատական:

Շատ կարևոր է, որ երեխան խաղա ոչ թե մեկ, այլ տարբեր խաղեր, ոչ թե մեկ, այլ տարբեր մարդկանց հետ: Խաղերի և խաղընկերների բազմազանության պայմաններում երեխան մեկ կպարտվի, մեկ հաղթող կճանաչվի՝ հնարավորություն ստանալով կողմնորոշվելու՝ ինչ գիտի և ինչ կարող է անել իքնը, իսկ ինչը՝ ոչ:

Ինչո՞վ է արդարացված խաղի միջոցով ուսուցում իրականացնելու գործելաոճը, և որո՞նք են դրա կազմակերպման առանձնահատկությունները:

Որպես գործունեության ձև՝ խաղը իրականացնում է հետևյալ գործառույթներ. դաստիարակող, շփման, հաղորդակցման, զարգացնող, կարգավորող:

Ուսուցիչը երեխայի համար պետք է ստեղծի այնպիսի խաղային միջավայր, որտեղ երեխան կկառողանա գտնել իր զարգացման համար անհրաժեշտը, օգտակարը, հուզական կողմնորոշման տեսանկյունից ստանալ զգայական հարուստ և բազմաբովանդակ տպավորություններ:

Երեխան հիմնականում գործում է անգիտակցաբար, նրա խաղը ուղղակի զարգացման պահանջունք է: Երեխայի համար կարևորը խաղի արդյունքը չէ, այլ՝ ընթացքը: Նա այն կարող է կրկնել բազմիցս՝ մինչև ներքին պահանջունքին բավարարումը:

Խաղն ազատ մտքի արտահայտման միջոց է, երևակայականը իրական դարձնելու հաճելի ձգտում:

Երեխաների խաղն աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով:

Նրանցից հիմնականն այն է, որ խաղը երեխաների կողմից շրջապատող կյանքի՝ մեծերի գործունեության, գործողությունների, նրանց փոխհարաբերությունների արտացոլումն է, ընդ որում, այնպիսի պայմաններում, որոնք ստեղծվում են երեխաների երևակայությամբ:

Խաղի առանձնահատկություններից է այն, որ երեխան հավատով է լցված և ճշմարիտ է համարում հորինված խաղի բովանդակությունը: Խաղային գործունեությունը, կերպարը և խոսքը հանդես են գալիս միասնական, կապակցված ձևով: Սա խաղի ոչ թե արտաքին հատկությունն է, այլ նրա բուն էությունը: Խաղային գործընթացում ուրույն նշանակություն ունի խոսքը, քանի որ երեխան երբեք լուռ չի խաղում: Խոսքը կարծես թե նվազակցում է խաղային գործունեությանը, օգնում առավել լիարժեք բացահայտելու կերպարը, դրսևորելու վերաբերմունքը նրա նկատմամբ: Խոսքային շփումը խաղի ընթացքում ունի հսկայական նշանակություն, քանի որ նման ճանապարհով երեխաները մտքեր, ապրումներ են փոխանակում, ճշտում և լրացնում են խաղի բովանդակությունը:

Խաղի կառուցվածքային տարրերը.

Խաղի հիմնական կառուցվածքային տարրերն են՝ խաղային մտահղացումը, խաղի այուժեն կամ բովանդակությունը, խաղային գործողությունները, դերերը, կանոնները, որոնք թելադրվում են խաղի բովանդակությամբ և ստեղծվում են երեխաների կողմից կամ առաջարկվում պատրաստի ձևով մեծերի կողմից:

Խաղի մտահղացումը. Սա ընդհանուր որոշումն է այն բանի, թե ինչ պետք է խաղան երեխաները: Այն մեկնաբանվում է խոսքի միջոցով, արտահայտվում խաղային գործողություններում: Իրենց մտահղացմամբ խաղերը պայմանականորեն կարելի է բաժանել առավել տիպիկ խմբերի.

- ա) կենցաղային երևույթներ արտահայտող խաղեր
- բ) ստեղծարար աշխատանք արտահայտող խաղեր
- գ) հասարակական երևույթներ, սովորույթներ արտահայտող խաղեր

Խաղի սյուժեն, բովանդակությունն այն է, ինչը կազմում է նրա կենդանի հյուսվածքը, բնորոշում խաղի զարգացումը, խաղային գործողությունների բազմազանությունը, փոխկապակցվածությունը, երեխաների փոխհարաբերությունները; խաղի բովանդակության հարստացման հիմնական աղբյուրը երեխաների պատկերացումներն են շրջապատող իրականության մասին: Բովանդակությունը խաղը դարձնում է հետաքրքիր, երեխաների մեջ խաղալու ցանկություն առաջացնում:

Դերը խաղի կառուցվածքային առանձնահատկությունն է և նրա կենտրոնը: Երեխան իր վրա է վերցնում այս կամ այն դերը՝ մարդու, կենդանու, նրանց երևակայական վարքով, գործողություններով, հարաբերություններով հանդերձ: Խաղում երեխաների կողմնորոշման առարկան տանում են մեծերի խնդիրները, վարքի դրդապատճառները, նորմերը, որոնց նրանք ենթարկվում են և որոնք կարգավորում են նրանց հասարակական հարաբերությունները: Կարևորն այն է, որ երեխան ոչ թե պարզապես խաղում է դերում, այլ ապրում է կերպարով, հավատում նրա իրական լինելուն:

Կանոնները ևս ունեն մեծ նշանակություն, քանի որ դրանցով են որոշվում և կարգավորվում խաղացողների վարքը, փոխհարաբերությունները: Շնորհիվ կանոնների խաղը ձեռք է բերում կազմակերպվածություն, կայունություն, ամրապնդվում է բովանդակությունը:

Կանոնների էական ֆունկցիան նաև ամաչկոտ, անհամարձակ երեխաներին ակտիվացնելն է:

Խաղի նշանակությունը երեխաների դաստիարակության և զարգացման գործընթացում:

Դպրոցական տարիքն ունի բացառիկ նշանակություն երեխաների ֆիզիկական, հոգեկան զարգացման համար: Կազմելով համակարգ՝ արդյունավետ գործունեության բոլոր ձևերը գտնվում են բարդ հարաբերությունների մեջ, միահյուսվում և լրացնում են մեկը մյուսին: Այդ համակարգի կենտրոնում է գտնվում խաղը, որը երեխայի առաջատար գործունեությունն է: Այն որոշիչ ազդեցություն է թողնում նրա անձնավորության ձևավորման վրա:

Խաղի էական, կարևոր նշանակությունն այն է, որ երեխան կանգնում է ուրիշ մարդու դիրքերի վրա, կարծեք թե նայելով աշխարհի նոր՝ մեծահասակի տեսանկյունից, որի դերը նա կատարում է:

Խաղը նոր պահանջումների դպրոց է: Այստեղ երեխան հուզական ճանապարհով կանխագուշակում է ապագա լուրջ, հասարակական արժեք և գնահատում ունեցող գործունեության ուրախությունը: Խաղն օգնում է կատարելու իր վրա կամավոր վերցրած պարտականությունները: Խաղը կարող է ծառայել երեխաների դաստիարակության և զարգացման բարդ խնդրին միայն այն դեպքում, երբ այն ներգրավվում է կազմակերպվող և կառավարվող մանկավարժական գործընթացի մեջ: Մանկավարժը նախագծում է խաղի ողջ ընթացքը՝ չխախտելով միևնույն ժամանակ նրա

յուրահասակությունն ու ինքնագործ բնույթը: Ղեկավարելով խաղը, մանկավարժը ներագրում է երեխաների գիտակցության, զգացմունքների, վարքի, կամքի, իմացական գործընթացների՝ ընկալման, ըմբռման, հիշողության, ուշադրության, երևակայության, խոսքի, մտքի, ինչպես նաև դիտունակության զարգացման վրա:

Մեծ է խաղի դերը երեխաների մտավոր զարգացման գործում: Այստեղ ճշտվում և խորացվում են երեխաների գիտելիքները, պատկերացումները:

Խաղի ընթացքում երեխաների մտավոր ակտիվությունը միշտ կապված է երևակայության հետ: Խաղը անփոխարինելի միջոց է երեխաների երևակայությունը զարգացնելու համար: Երևակայական պատկերն այստեղ հանդես է գալիս որպես խաղային գործունեության ծրագիր: Ճիշտ չէ այն կարծիքը, թե խաղալիս երեխաները չունեն ոչ մի կոնկրետ նպատակ: Բանն այն է, որ խաղի ընթացքում երեխաները հաճախ փոխում են իրենց նպատակները՝ համապատասխանեցնելով դրանք նոր միջոցների կամ ընդհակառակը՝ փոխում են միջոցները՝ հարմարեցնելով դրանք նպատակների: Նման վերափոխությունները հիմնականում պայմանավորված են ոչ թե անսպասելի կամ անհաղթահարելի արգելքներով, այլ ուղղակի մանկական երևակայության թռիչքով: Խաղի միջոցով սնելով իրենց երևակայությունը, երեխաները խորացնում և ամրապնդում են անձի շատ արժեքավոր հատկություններ՝ համարձակությունը, վճռականությունը, կազմակերպվածությունը, հնարամտությունը և այլն:

Այսպիսով՝ խաղը հանդես է գալիս ոչ միայն որպես հետազոտության միջոց, այլ նաև որպես հնարամտության դրևորման ձև:

Խաղն ունի բացառիկ նշանակություն երեխաների բարոյական հատկությունների ձևավորման հարցում: Խաղը յուրահաստակ դպրոց է, ուր որոշակիորեն ձևավորվում է հենց իրենց՝ երեխաների հասարակական վարքը, նրանց վերաբերմունքը կյանքի և միմյանց նկատմամբ: Այստեղ դրսևորվում և ամրապնդվում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են զսպվածությունը, ազնվությունը, համարձակությունը, ձեռներեցությունը: Մանկավարժը ղեկավարելով խաղը՝ խմբի միջոցով ազդում է առանձին երեխաների վրա: Խաղի ընթացքում երեխան իր գործողություններն ու ցանկությունները ենթարկում է ընդհանուր գործողություններին, սահմանված կանոններին: Նա պատասխանատվություն է զգում խմբի առջև հանձնարարված գործի համար: Այստեղ ձևավորվում են ընկերասիրությունը, բարեկամական զգացմունքները, ընդհանուր նպատակին հասնելու համաձայնեցված գործողությունները, վիճելի հարցերը արդար լուծելու կարողությունները:

Խաղերն իրենց բովանդակությամբ կարող են ոչ միայն դրական, այլև բացասական ազդեցություն ունենալ երեխաների վրա:

Օրինակ, կան այնպիսի խաղեր, որոնք նպաստում են ատելության, կոպտության, դաժանության առաջացմանը և նյարդային համակարգի վրա բացասական ազդեցություն են թողնում:

Խաղերը շատ սակավ են լինում պատահական կամ քառասյին: Նույնիսկ այն ժամանակ, երբ խաղում են մենակ՝ առանց մեծերի անմիջական ղեկավարման, նրանք ինքնուրույն որոշում, սահամանում և անառարկելիորեն ենթարկվում են խաղի կանոններին:

Ինչպես ցանկացած մանկավարժական հնար, այնպես էլ հետաքրքրաշարժության տարրերով հարուստ խաղը կարող է նույնիսկ ձանձրացնել երեխաներին, եթե չփոփոխվի ու անընդհատ կրկնվի նույնությամբ: Այդ իսկ պատճառով խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Ցանկացած խաղ ցանկալի է տեսնել ոչ թե անխախտ կադապարի, այլ աստիճանական զարգացման մեջ, որպեսզի երեխայի մեջ չկորչի հետաքրքրությունը թե խաղի և թե ուսուցման նկատմամբ:

Դիտարկումը ցույց է տվել, որ կրտսեր դպրոցականների միջավայրում խաղն առավել արդյունավետ է լինում, եթե մինչև կիրառումը քննարկվում է աշակերտների հետ:

Երբ հաշվի են առնվում երեխաների առաջարկությունները, խաղը դառնում է ավելի հետաքրքիր: Աշակերտները մեծ հաճույքով են մասնկացում և հեշտությամբ ու առանց պարտադրանքի ներգրավվում են ուսումնական գործունեության մեջ:

Խաղի արդյունավետությունը պայմանավորված է դրա ճիշտ և նպատակային կազմակերպմամբ: Խաղը կազմակերպելիս հարկավոր է նկատի ունենալ հետևյալը՝

- խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի երեխաների գիտելիքների մակարդակին,
- այն պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը,
- խաղի տևողությունը պետք է լինի չափավոր:

Խաղի ընթացքում անհրաժեշտ է ապահովել կարգապահության և արդարամտության մթնոլորտ: Խաղի միջոցով զարգանում է երեխայի մտածողությունը, կյանքի են կոչվում բազմազան հետաքրքրություններ: Կոփվում է նրա ուշադրությունը, ընդլայնվում են գիտելիքների շրջանակները, բարձրանում է տրամադրությունը: Ստեղծվում են ոչ ստիպողական, մտերմիկ փոխհարաբերություններ: Խաղը նպաստում է բնավորության դրական գծերի ձևավորմանը: Վերջապես այն երեխայի կենսունակության կարևոր աղբյուրն է, առանց որի չկա երջանիկ մանկություն:

Խաղերը բազմաբնույթ են, բայց նպատակը մեկն է՝ ուսուցանել և դաստիարակել:

Բոլոր խաղերը լայնորեն օգտագործվում են որպես ֆիզիկական դաստիարակության միջոց: Կրտսեր դպրոցականի աճող օրգանիզմն ակտիվ շարժումներ է պահանջում: Դրանք նպաստում են նյութափոխանակության, արյան շրջանառության և շնչառության կարգավորմանը: Խաղերը նպաստում են ճիշտ կեցվածքի ձևավորմանը, շարժումների կորդինացմանը և գեղեցկությանը: Անհրաժեշտ է հիշել, սակայն, որ խաղն ինքնստիճանի չի կարող դառնալ ֆիզիկական դաստիարակության միջոց: Առանց մանկավարժական միջամտության ղեկավարման այն նույնիսկ կարող է վնասել

երեխաների ֆիզիկական զարգացմանը: Շարժողական խաղերն ազդում են նաև անձնային որակների ձևավորման վրա, զարգանում և ամրակայվում են կամքը , համարձակությունը: Երեխաները դառնում են ավելի գործուն, առաջանում են դրական հույզեր:

Կոլեկտիվ սպորտային խաղերը և մրցումները զարգացնում են կոլեկտիվում գործելու, ընկերոջն օգնելու, դասարանի և դպրոցի պատիվը բարձր պահելու կարողությունը: Չի կարելի թույլ տալ, որ մրցակցությունը դառնա ինքնանպատակ և առաջացնի միայն պարզ ստանալու կամ առաջնային տեղ գրավելու ցանկություն: Այս դեպքում կարող են ձևավորվել բացասական որակներ, փառասիրություն և նախանձ:

Խաղը նպաստում է նաև աշխատանքային դաստիարակությանը: Խաղում աստիճանաբար ձևավորվում են երեխաների պատկերացումներն աշխատանքի նշանակության, տարբեր մասնագիտությունների դերի մասին:

Խաղը մեծ չափով ծառայում է նաև գեղագիտական դաստիարակությանը: Խաղի ընթացքում երեխաները հաճախ երգում, պարում են, արտասանում ոտանավորներ, հանելուկներ, զարդարում են իրենց կառույցները, որն անշուշտ նպաստում է գեղագիտական ճաշակի զարգացմանը:

Կրտսեր դպրոցական տախիքում երեխաները հաճույքով խաղում են դիդակտիկ խաղեր: Դիդակտիկ խաղերի միջոցով երեխաները ծանոթանում են մարդկանց և բնության երևույթների կապերին ու փոխհարաբերություններին: Բազմազան խաղերի մեջ մաթեմատիկական դիդակտիկ խաղերի դերը բավականին մեծ է: Դրանց նպատակը միայն զվարճություն պատճառելը չէ, այլև խաղային իրավիճակում մաթեմատիկական գիտելիքներին հաղորդակից դարձնելը, մաթեմատիկայի նկատմամբ ընդհանուր հետաքրքրություն առաջացնելը: Խաղի ժամանակ ամենաթույլ աշակերտն անգամ ոգևորվում է և ցանկություն հայտնում մասնակցելու խաղին: Այդ կերպ նա ձեռքագատվում է բարդություններից: Երեխան խաղալով աննկատ ձեռք է բերում մաթեմատիկական գիտելիքներ: Այս խաղերի ժամանակ երեխաները համեմատում են, համադրում, ընդհանրացնում և զարգացնում տրամաբանական մտածողությունը:

Կրտսեր դպրոցական տախիքում մեծ տեղ են զբաղեցնում **դերային խաղերը**: Խաղի ժամանակ երեխան ձգտում է տիրապետել անձի այնպիսի որակների, որոնք նրան դուր են գալիս: Առաջին պլանի վրա են մղվում ազնվություն, համարձակություն, քաջություն դրսևորող դերերը: Դերային խաղերում աշակերտները հաճախ ձգտում են այն դիրքին, որն իրականում չկա:

Օրինակ, ուսման մեջ հետ մնացող աշակերտը կատարում է լավ սովորողի դերը: Արդյունքում երեխան սկսում է ինքն իրեն ներկայացնել այն պահանջները, որոնք անհրաժեշտ են առաջադեմ աշակերտ դառնալու համար: Դերային խաղը կարելի է դիտարկել որպես կրտսեր դպրոցականին դեպի ինքնադաստիարակության մղող գործոն: Ինչպես երեխան իրեն խաղի ժամանակ է դրսևորում, հիմնականում այդպես էլ կդրսևորի

աշխատանքում, երբ մեծանա: Այդ պատճառով ապագա գործչի դաստիարակությունն ամենից առաջ տեղի է ունենում խաղի միջոցով:

Ռուս ակնավոր ռեժիսոր Կ. Ստանիսլավսկին երեխայի խաղը դիտարկել է այսպես. «Երեխան խաղում է անմիջականորեն և լավ գիտե, թե ինչն է ճիշտ, ինչը՝ սուտ»: Երեխան իմանալով հանդերձ, որ դա խաղ է և ոչ իրականություն, խաղում է շատ նվիրված և անկեղծ: Ստանիսլավսկին կոչ էր անում դերասաններին՝ երեխաներից »խաղալ« սովորել:

Խաղերից չենք կարող գատել համակարգչային խաղերը: Այսօր լայնածավալ է համակարգչային խաղերի աշխարհը, որտեղ կարելի է գտնել ցանկացած ճաշակի խաղ: Իսկ ինչպե՞ս ընտրել գրավիչ և օգտակար խաղեր: Ճիշտ ընտրություն կատարելու համար մասնագետները համակարգչային խաղերը դասակարգել են ըստ ժանրերի՝ **զվարճացնող, արկածային, դերային, տրամաբանական, սպորտային, ստրատեգիական, նմանակող, ավանդական:**

Համակարգչային խաղերն էլ երեխաների համար ունեն կարևոր նշանակություն: Նախ և առաջ դրանք աովորեցնում են օգտվել համակարգչից և կառավարել այն: Իսկ դա հնարավորություն է տալիս հետզհետե ավելի լուրջ աշխատանք կատարել: Համակարգչային խաղերը զարգացնում են տրամաբանական մտածողությունը, աչքաչափը, շարժումների համակցումը: Գործնականորեն ցանկացած համակարգչային խաղ էլ զարգացնում է այս կամ այն կարևոր կամ օգտակար հմտությունը:

Այնուհանդերձ, անհրաժեշտ է այդ զբաղմունքը երեխաներին հանձնարարել որոշակի վերապահումներով: Խաղի տևողությունը և բովանդակությունը պետք է համապատասխանեն երեխայի տախիբին:

Դպրոցի նպատակների ու խնդիրների փոփոխմանը զուգընթաց, բնականաբար փոխվում են նաև ուսուցման մեթոդներն ու միջոցները: Խաղն ուսուցման գործընթացում օգնում է բազում նպատակների իրականացմանը: Լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական բազմապիսի խնդիրներ: Տարրական դասարաններում ճիշտ ընտրված և իրականացված խաղի շնորհիվ կարելի է հասնել բարձր արդյունքների: Խաղն անհրաժեշտ է դիտել զարգացման մեջ՝ փոփոխելով ու հարմարացնելով թե ուսումնական առարկային, թե տվյալ մանկավարժական գործընթացի նպատակներին և թե երեխաների տարիքային զարգացման աստիճանին, հետաքրքրություններին ու տրամադրություններին:

Խաղերի ճիշտ ընտրության և կազմակերպման դեպքում դրանք անդավաճան զինվորների նման կծառայեն թե երեխաներին, թե նրանց հետ աշխատող մեծահասակներին: